ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Բիո-Քիմ ՍՊԸ-ն ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2025/5 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
24	Բիո-Քիմ ՍՊԸ	ԲԻՍԻ Գլուստերոն 2%	ԲԻՍԻ	Բիո-Քիմ ՍՊԸ	BC GLUSTERON 2% Բարձր մակարդակի ախտահանող և մանրէազերծող միջոց BC Glusteron 2% միջոցը նախատեսված է բժշկական սարքավորումների, ստոմատոլոգիական և վիրարաբուժական գործիքների, ջերմազգայուն սարքերի, կոշտ և ճկուն էնդոսկոպների բարձր մակարդակի ախտահանման և մանրէազերծման համար: Հատկություններ - Կայուն ալդեհիդ պարունակող միացություն - Չեզոք pH - Օգտագործման համար պատրաստի - Չի պահանջվում

					ակտիվացում - Բարձր ախտահանիչ և հակասպորային ակտիվություն -Պիտանի է ջերմազգայուն ստոմատոլոգիական և վիրաբուժական գործիքների ախտահանման համար - Կոռոզիա չի առաջացնում: Բաղադրությունը BC Glusteron 2 % լուծույթը պարունակում է գլուտարալդեհիդ 2 %, բուֆերային միացություն, կոռոզիայի ինհիբիտոր, օժանդակ նյութեր, ներկանյութ և ջուր: Կիրառումը Առաջարկվող չափաքանակը 2 %- բարձր մակարդակի ախտահանման և մանրէազերծման համար: Օգտագործման եղանակը BC Glusteron 2 %-ը օգտագործման համար պատրաստի լուծույթ է և նոսրացման կարիք չունի: Բոլոր մանրէազերծվող գործիքները նախօրոք ենթարկել նախամանրէազերծումային մաքրման BC Pre CleanUP կամ BC Dezinon լուծույթներով: Քանդվող գործիքները բաժանել մասերի, որպեսզի բոլոր մակերեսները շփվեն լուծույթի հետ: Ընկղմել գործիքները BC Glusteron 2 % լուծույթի մեջ,

						այնպես, որ նրանք ամբողջությամբ ընկղմված լինեն: Բարձր մակարդակի ախտահանման տևողությունը 10 րոպե է: Մանրէազերծման տևողությունը 60 րոպե է: Զգուշորեն հանել գործիքները լուծույթից, լավ լվանալ մարէազերծ ջրով (հատկապես խոռոչներ ունեցող գործիքները), չորացնել մանրէազերծման անձեռոցիկով և տեղավորել մանրէազերծ տուփի մեջ: Ավելի մանրանասն ախտահանման և մանրէազերծման ձևերի ու տևողության մասին կարող եք կարդալ օգտագործման հրահանգում: Ազդեցության ոլորտը Մանրէներ՝ գրամդրական և գրամբացասական (ներառյալ տուբերկուլյոզի միկոբակտերիաներ), վիրուսներ (ներառյալ հեպատիտ, ՄԻԱՎ վարակի հարուցիչներ և պոլիոմելիտ), սնկեր (ներառյալ կանդիդոզ և դերմատոֆիտիա), ինչպես նաև հակասպորային ակտիվություն (Bacillus subtilis).: Անվտանգության կանոններ - Վտանգավոր է շնչառության և կուլ

					տալու դեպքում: - Զգուշանալ այրվածքներից: - Խուսափել աչքերի մեջ և մաշկի վրա ընկնելուց: Ընկնելու դեպքում անմիջապես լվանալ առատ ջրով և դիմել բժշկի: - Օգտագործել լավ օդափոխվող տարածքներում՝ կրելով պաշտպանիչ դիմակ և ձեռնոցներ: - Պահել երեխաներին անհասանելի տեղում՝ +5°C-ից +35°C ջերմաստիճանում: - Չօգտագործել պիտանելիության ժամկետի ավարտից հետո: - Օգտագործման համար պատրաստի լուծույթի պահպանման ժամկետը 30 օր է: - Լուծույթները պահել մաքուր, հերմետիկ փակվող տարաներում: Փաթեթավորում Տարա-1000 մլ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Բիո-Քիմ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱԲԿ-ԷԱՃ-ԱՊՁԲ-2025/5 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
24					